Իսրայեանն ի ճակատ,
Տիրաճամբար բանակին,
Ի՞ւ ստանայր յաղթանակ
Պարսպաքարին հարուածով.
Դաւիթ զգովեստ ձայն արձակ
Ի Հրէուհեաց պերճ շքով,
Վիշտ և վտանգ ծովածուփ
Զտեն զմարդն զերթ ոսկի,
Երանեկանն հուպ առ հուպ
Առնել փառաց արժանի,
Յորինակացս հետևի
Թէ դեւք միջոց և պատճառ
Են մեզ մարդկանց հողածնի
Յաւէրժ փառացն այն անճառ,
Յակնարկութեանց Արարչին
Դարձ և կորուստն սահմանի
Ըստ նախնկար առակին
Փարաւօնեանն խիստ սրտի,
Կամ՝ ըստ կաւեայ անօթոց
Բազմատեսակ ամանաց
Ի ճիշդ բանից սուրբ գրոց
Պարտիմ՝ լինել իրազգաց,
Զի ոմն պատիւ ոմն յանարգ
Ի փորձ ձեռացն անդստին
Բրգին կազմին կարգ առ կարգ
Ստեղծուածոցս ի քննին,
Բարի են կամքդ Արարիչ,
Ամենախոր քո գաղտնիք
Այլ մարդն հող և ոչինչ
Խելակարօտ զերթ մանկիկ,
Խորհուրդքս մեր զանգիտող,
Եւ աղբաղբիկ մեր հնար
Առ ոտս անկեալն չգտող.
Զգտիմք աստեղց քննել շար,
Արդ սուտ վիճին շատ մարդիկ
Թէ դեւք կարծիք են մտաց,
Թէ ըստ իրին չէ և չիք,
Ինչ լուսեղէն արարած,
Որ մոլորեալ միշտ անդարձ
Մնայ, ի վիհ կորստեան,
Եւ զերթ յիմար ընդ Աստուած
Ի Մարտ զինի յաւիտեան.

Ս. Յարութիւն Աղիբեգեանց

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԷՐ

ՇՈՒՇԱՆԱՑ ՏԻԿՆՈՋ ՖՈՒԱՆԳԻԼԵԱՆՑ

Ջանիւք գերապատիւ Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսի Վեհապետեանց՝ Կառավարչին թեմին Աստրախանայ՝ մի փառաւոր և մեծ թաւշեայ (մախմուր) վարագոյր վասն Աւագ սեղանոյ Մայր Աթոռոյս Նուիրեց Աստրախանաբնակ բարեպաշտուհի տիկին Շուշան Մելքոնեանց Ֆուանգիւլեանց՝ ի յիշատակ հանգուցեալոց ի Տէր՝ ամուսնոյն Յակոբայ Ստեփաննոսեան Ֆուանգիւլեանց՝ և դստերն՝ օրիորդի Մանուշակայ Յակոբեան։

Յիշեալ առաքինի տիկնոջ ջերմեռանդութիւնը կը գովեմք և հրապարակաւ կը յայտնեմք մեր խորին շնորհակալութիւնը, միանգամայն կաղաչեմք զԱստուած, զի լուսաւորեսցէ զՀոգիս առն իւրոյ և դստերն, և արժանացուսցէ ի լոյս փառաց երեսաց իւրոց յերջանիկ կեանս յաւիտենականութեան։

ՍՈՎ Ի ՍՊԱՀԱՆ ԵՒ Ի ՇՐՋԱԿԱՅՍ

Յաւ ի սիրտ կը փութամք դուժել ի քանի ամսոց հետէ ի Սպահան և ի շրջակայսն բնակեալ մերազնեայց մեծ տագնապներով և տառապանքներով կրած անասելի և միանգամայն մահ սպառնացող սովը։

Վեհ. Կաթողիկոս լսելով ողորմելի ազգայնոցս ողբալի վիճակը, ըստ իւրում սեպուհ և սրբազան պարտաւորութեան՝ մանաւանդ թէ առաւել աղեխարշ և սրտա-

ճմլիկ գորովանօք շարժեալ յորդեսէր ի խնամոցն, անմիջապէս հեռագրեց և հրամայեց Գաւրիժոյ Գեր. Առաջնորդ Գրիգոր Արք Եպիսկոպոս Յովսէփեանցին, որպէս զի կարևոր օգնութիւնքը և տեղւոյն ձեռնհաս ազգայնոց օժանդակութիւնքը հասուցանէ, և արդէն բաւական գումար ի նպաստ սովալլուկ խղճալեաց ղրկուած լինելը՝ յիշեալ Գեր. Առաջնորդը ծանուցած է Նորին Ս. Օծութեան: Բայց այսքանով չբաւականանալով Ս. Հայրապետը, միջոցաւ Սինօդի Ս. Էջմիածնի հրամաններ արձակեցան առ Գեր. Առաջնորդըս և կառավարիչս թեմից Հայոց Ռուսաստանի, որպէս զի ամեն կարելի միջոց ի կիր առնելով ընդ փոյթ՝ ի ձեռնհաս ազգայնոց հաւաքուին նուէրք և նպաստք յօգնութիւն և ի մխիթարութիւն Սպահանայ և շրջակայից դժբաղդ եղբարց մերոց, յորոց տասն տնուոր 77ի չափ անձամբք հազիւ մազապուրծ փախչել կարողացած և ամսոյս սկիզբները հասած են ի Մայր Աթոռս, ուր հիւրասիրուելով՝ անհրաժեշտ եղած խնամքները հոգացուեցան ի կողմանէ Մայր Աթոռոյ մերոյ:

Արդ անտարակոյս եմք՝ զի Ռուսաստանաբնակ սիրելի ազգայնոցս կարեկցութիւնը չպիտի հանդուրժէ անտարբեր մնալ ի նպաստ և յօգնութիւն նոյն ողորմելի ազգայնոց, որով պէտք է սիրեն նոքա և պիտի փութան ըստ ջերմեռանդ և գթասիրտ բնաւորութեանցն առատ նուէրներով յայտնել իւրեանց եղբայրսիրութիւնը, և քրիստոնէավայել պարտաւորութեամբ պէտք է մխիթարեն ի Սպահան և ի շրջակայն բնակեալ սովալլուկ և թշուառ մերայինս այլք:

ՄՈՎՍԷՍ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ըստ կանխագոյն հրամանի Վեհ. Կաթողիկոսի՝ Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց Առաջնորդ Գեր. Մովսէս Արք Եպիսկոպոս յ7ն ամսոյս հասաւ ի Մայր Աթոռս:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԱՊԻԿՔ

Ջանիւք Գեր. Հոգևոր — Տեսչին Շամախւոյ Անդրէաս Ս. Արք Եպիսկոպոսի՝ բարեպաշտուհի Տիկնայք ոմանք ի Բագու ութն հատ կերպասեայ եկեղեցական շապիկք նուիրած են Ս. Տաճարիս Էջմիածնի ի յիշատակ ննջեցելոց իւրեանց, որք յիշատակագրուած են ի վերայ շապկաց:

Հրապարակական շնորհակալեաց և գովեստից արժանի են տիկնայքն այնոքիկ, զոր հրատարակելով միջոցաւ ամսագրոյս կըղձանամք բարի օրինակ և նախանձ ազդել ջերմեռանդ Տիկնայց ազգիս:

Սուրբ Տաճարս Կաթողիկէ Էջմիածնի Մայր և կեդրոն լինելով համայն ազգիս՝ արդարև ըստ նիւթական մասին ևս համայն ազգայնոցս պարծանքը և մխիթարութիւնը գրաւելու համար խիստ մեծ կարօտութեանց մէջ կը գտնուի, ուստի քաղցր է մեզ յուսալ՝ զի ջանիւք Գեր. Առաջնորդաց և առատ նուէրներով ձեռնհաս երևելի իշխանաց և տիկնայց Ազգիս կամ յատուկ ընկերութիւնք կազմելով՝ ըստ արժանւոյն կը զարդարուի և կը շքեղանայ ըստ նախկին պայծառութեանն սուրբ տաճարս յուրախութիւն և ի մխիթարութիւն ազգիս Հայոց: